
ԱԶԱՏԱԲԱՂՁ ԳԱՐԻԲԱԼԴԻԱԿԱՆՆԵՐԸ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՉՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին հայ ժողովրդի պատմական ճակատագիրը նմանվում է իտալական բախտակից ժողովրդի պատմությանը: Եթե XIX դարի սկզբներին հայ գործիչները դրվատանքով էին գրում իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին, ապա դարավերջի երրորդ քառորդին ազատաբաղձ գարիբալդիականները, որոնց երկիրը միավորել էր, աշխատում էին գործնական միջոցներով օգտակար լինել հայ ժողովրդին:

1894–1896 թթ. արդուլիամիոյան հայկական ջարդերի շրջանում թուրքական արյունոտ քաղաքականության դեմ իրենց ձայնը բարձրացրին աշխարհի առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները, այդ թվում ազատաբաղձ Բտալիայի գավակները: Նրանցից էր Հալեպի իտալական հյուպատոս, Բտալիայի անկախության պատերազմի հերոս՝ Հենրիկոս Վիթոն: Նրա ղեկավարած հանձնախմբի կազմի մեջ էին Բտալիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները: Վերջին պահին աշխատանքներին հրաժարվեցին մասնակցել Գերմանիան և Ավստրո-Հունգարիան ու իրենց մանդատը վայր դրեցին: Հանձնախումբը 1896 թ. հունվարին այցելում է Ջեյթուն՝ տեղում քննելու հայկական կոտորածների հարցը: Պատվիրակներից շատերը, դիտելով Ջեյթունի տեղադիրքը, ապշած մնացին, որ Ջեյթունը այդքան փոքրաթիվ ուժերով կարողացել է դիմադրել թուրքական հրոսակներին: Հ. Վիթոնի հանձնախումբը, փոխադարձ զիջումների պայմանով, համաձայնության է բերում հայկական և թուրքական կողմերին, որի արդյունքը եղավ 1896 թ. հունվարի 30-ի համաձայնագիրը: Դա զեյթունցիների հաղթանակի գրավականն էր¹: Բայց այստեղ հետաքրքրականն այն է, որ «ազատաբաղձ գարիբալդիականը»՝ Հենրիկոս Վիթոն, աշխատում էր օգնության հասնել մի ժողովրդի, որն իր պատմությամբ և ճակատագրով նմանվում էր իտալացիներին:

Հայ նշանավոր գրող Արփիար Արփիարյանը «Նոր կյանք» պարբերականում «Օրվան կյանքը» վերնագրով հոդված գրեց՝ նվիրված այս հիշարժան պատմական դեպքին: «Խանդավառ բոցով աչքերը լեցված,– գրում է Արփիար Արփիարյանը,– Վիթոն խնդրեց իբր դյուցազնական սրբության հիշատակ մը գուրգուրանքով իր հայրենիքը պահել Թուրքին գնտակներեն ծակ–ծակ դրոշը, որ Ջեյթունի սարերեն ամիսներ ամբողջ մարդկության սիրտը տրոփել տվավ: Դեռ վառող բուրոդ իրենց արյունակաթ ձեռքերովը, վերջին համբույրին հետ, իբր վավերացում, իրենց անուններն ալ փառքերու վկա այդ լաթին վրա դրոշմեցին, ինչպես սարերուն գագաթը,

¹ Հ. Մ. Պոդոսյան. Ջեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 354–355:

այն երիտասարդները, որոնք դրսեն վազած էին Ջեյթունցիին հետ գրկընդիստն մեկ սիրտ, մեկ հոգի կովելու թշնամիին դեմ:

Իր ազատությանը համար մարտիրոսացող ժողովրդի մը գալարումներուն ի տես *ն' չ' Ֆրանսացին, ո' չ' Անգլիացին կը զգան Բտալացիին սարսուռը: Օտարին կոշկոճիչ թակը անոր գլուխն ալ շատ ատեն ճզմած պահեց»²: Բսկ քանի որ դրոշը ծակծկվել էր արյունահեղ մարտերի ժամանակ թշնամու գնդակներից, ապա այն ավելի թանկ էր ինչպես իտալացու, նույնպես էլ հայի համար: Ա. Արփիարյանը գտնում էր, որ առանց իտալական մեծերի հնարավոր չէր Բտալիայում միասնության հասնել, շեշտում է նաև նրանց հայրենասիրական ոգին. «Կարիպալտին եկած էր Քավուրին հետ. քաջություն ու խելք ձեռք ձեռքի տված հայրենասիրության մեծ հովանիին տակ»³:*

Ա. Արփիարյանը նախ իրավացիորեն նկատում է, որ հային չի հասկանա *ն' չ' ֆրանսիացին, ո' չ' անգլիացին, քանի որ նրանք իրենց մաշկի վրա չէին զգացել ճնշման սարսուռը, այլ, թերևս, միայն հասկանա իտալացին, որը կրել էր բռնապետական դաժան լուծը: Բտալիան թոթափեց բռնապետական լուծը և հաղթեց՝ շնորհիվ կոմս Կամիլիո Կավուրի, Ջուզեպպե Գարիբալդիի և Հենրիկոս Վիթոյի նման հայրենասերների:*

Հայ ժողովրդի ճակատագրով հետաքրքրվում էին նաև Բտալիայի մյուս հայրենասեր գավակները՝ Ռիչչիոտի Գարիբալդին (28.3.1847 – 17.7.1924) և Ամիլյարե Չիպրիանին (18.10.1844 – 2.5.1918): Առաջինը Բտալիայի ժողովրդական հերոս Ջուզեպպե Գարիբալդիի կրտսեր որդին էր: Նա իր հոր հետ միասին կովել է 1866 թ. ավստրո-պրուսական պատերազմում, մասնակցել 1867 թ. Հռոմի գրավման համար մղվող Մենտանեի ճակատամարտին: Ավելի ուշ՝ 1870–1871 թթ., ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, որպես հանրապետական գործիչ, ֆրանսիական կողմի հետ դաշնակցած կովել էր Պրուսիայի դեմ: Այստեղ նա Վոզեզյան բանակի 4-րդ կամավորական (իտալական) բրիգադի հրամանատարն էր: 1897 թ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ նույնպես կամավորական բրիգադի հրամանատար էր: Այդ բրիգադը մարտնչում էր Հունաստանի կողմում՝ Թուրքիայի դեմ: Ռ. Գարիբալդին մասնակցել է նաև 1911–1912 թթ. իտալա-թուրքական պատերազմին⁴:

Մյուս հերոսը՝ Ամիլյարե Չիպրիանին, մասնակցել է 1859–1860-ական թվականների ֆրանս-իտալա-ավստրիական պատերազմին, որտեղ լուծվում էր Բտալիայի ազատագրման հարցը: Նա հատկապես աչքի է ընկել գարիբալդիականների 1860 և 1866 թթ. արշավանքների ժամանակ: Ա. Չիպրիանին, որպես 1866 թ. արշավանքի մասնակից, դատապարտվել է մահապատժի, բայց հեռացել է Բտալիայից, մասնակցել է Կրետե կղզու 1866–1869 թթ. թուրքերի լծի դեմ ուղղված հույների ապստամբությանը: 1871 թ. Փարիզի կոմունայի պարտությունից հետո նա բռնվել է և ֆրան-

² Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820–1920 թթ.), Տեքստը պատրաստեցին, առաջարկը և ծանոթագրությունները գրեցին Ալ. Զաքարյանը և Գ. Հովհաննիսյանը, Երևան, 1982, էջ 286–287:

³ Նույն տեղում, էջ 287:

⁴ Советская историческая энциклопедия, т. 4. М., 1963, с. 109.

սիական դատարանի կողմից դատապարտվել մահապատժի, որն այնուհետև փոխարինվել է ցմահ բանտարկությամբ: Ներումից հետո միառժամանակ մնում է Փարիզում, իսկ ավելի ուշ տեղափոխվում է Իտալիա: 1867 թ. ինքնապաշտպանության նպատակով մարդ է սպանում և դատապարտվում է 25 տարվա բանտարկության: Ա. Չիպրիանիի բանտից ազատման համար Իտալիայում տեղի ունեցան քաղաքական ցույցեր:

Ա. Չիպրիանին սոցիալիստ էր և մասնակցել է Երկրորդ Ինտերնացիոնալի 1893 թ. Յյուրիխի և 1896 թ. Լոնդոնի վեհաժողովների աշխատանքներին: Նա ծավալել է նաև հասարակական գործունեություն, թղթակցել է «Յումանիտե» թերթին, որը հրատարակում էր Ֆրանսիայի նշանավոր հումանիստ Ժան Ժորեսը:

Ռ. Գարիբալդին և Ա. Չիպրիանին իտալական պառլամենտի անդամներ էին: 1897 թ. իրենց կամավորական ջոկատներով նրանք օգնեցին հույն ժողովրդին, որն ապստամբել էր թուրքական բռնապետական լուծը տապալելու: Ա. Չիպրիանին քրիստոնյա հույն ժողովրդի ազատության համար մղած կռիվներից մեկի ժամանակ ծանր վիրավորվեց: Դա էլ պատճառ եղավ «իր և մեծանուն ընկերոջ վրա բովանդակ աշխարհի սքանչացումը» հրավիրելուն:

Ռ. Գարիբալդին և Ա. Չիպրիանին 1899 թ. նամակներ են ուղղում հայ ժողովրդին: Ռ. Գարիբալդին մարտի 27-ի թվակիր նամակում գրում էր. «Բացարձակապես անօգուտ կը կարծեմ խաղաղության խորհրդածոդովին դիմելը»: Իտալացիները ժամանակին համոզվեցին, որ խաղաղության ոչ մի խորհրդածոդով չի կարող ազատագրել «տառապած մի ժողովրդի»: «Հայերը, ինչպես և մյուս ժողովուրդները, որոնք այսօր Թուրքիոյ բռնության լուծը կը կրեն, եթե ազատ ըլլալ կուզեն, պետք է այդ արդարության և մարդկայնության գործը պահանջեն զենքը ձեռնին»⁵: Ռ. Գարիբալդիի կարծիքով միայն ապստամբության ուղով հայերը կարող էին ազատվել թուրքական բռնապետական լծից և իրենց վրա հրավիրել եվրոպական դիվանագիտության ուշադրությունը: Եթե գործը հասնի ապստամբության, իտալացիներից օգնություն խնդրելու հարցին, ապա այդ դեպքում նա պատրաստ է օգնելու: «Ես և իմ բարեկամներս մենք մեզ ձեր տրամադրության տակ կը դնենք դժբախտ հայ ժողովրդին, որուն հետ է մեր բոլոր համակրությունը»⁶:

Ա. Չիպրիանին Փարիզից 1899 թ. ապրիլի 4-ին իր նամակներում նույնպես կարեկցանք էր հայտնում հայկական դատի վերաբերյալ և գորավար Ռ. Գարիբալդիի նման հակված էր կարծելու, որ խորհրդածոդովներն այս հարցը չեն կարող լուծել, քանի որ եվրոպական մեծ պետությունները Թուրքիայից ունեն իրենց սպասելիքներն ու հաշիվները: Նրանք աշխատում էին Թուրքիան անդամահատել և «առյուծի բաժինն ստանալ»: Ա. Չիպրիանին դատապարտում էր եվրոպական մեծ տերություններին այն բանի համար, որ նրանք հայկական ջարդերի օրերին չուզեցին խառնվել սուլթան Աբդուլ Համիդի ներքին գործերին և աշխատեցին հովանավորել նրան և նրա գահն անասան պահել: Այդ սուլթանի ձեռքերն արյունի մեջ

⁵ «Դրոշակ», 1899, -3, էջ 34:

⁶ Նույն տեղում:

էին թաթախված, նա «գոեհիկ չարագործ է, ավագակ է, եղեռնագործ է»: «Այս տխուր փորձերեն ետքը, – գրում է նա, – քաղաքակիրթ ըսված Եվրոպայեն հուսալիք բան չունինք:

Ողբերգական թույլի մը մեջ ան երեսի վրա ձգեց ձեզ, երբ թրքական յաթաղանը ձեզմեն հազարավորներ կը մանգղեր, թեն Եվրոպայի ժողովուրդները ձեզի հետ էին⁷: Ա. Չիպրիանին գտնում էր, որ եվրոպական մեծ տերությունների դաժան քաղաքականությունից զատ, որոնք հանդես եկան թուրքական սուլթանի պաշտպանության դիրքերից, կար նաև եվրոպական ժողովուրդների բարոյական աջակցությունը, որը «հարստահարված ժողովուրդների» օգտին էր: Նա իրավացիորեն նշում էր, որ եվրոպական կառավարությունները երբեք ազատություն չեն շնորհի ժողովրդին: Ուրեմն մնում էր մի հանգամանք. «Ազատությունը կովելով և զայն արյունով լողցնելով ձեռք կը ձգվի:

Հարստահարված ժողովուրդները մեկ իրավունք միայն ունին, անվիճելի իրավունք – ապստամբությունը:

Եթե դուք խելամտորեն զայն պատրաստելու միջոցներ ունիք, վստահ եղիք իմ վրա, իմ աջակցության վրա⁸:

«Հին մեծանուն գարիբալդիական ռազմիկի»՝ Ա. Չիպրիանիի երկրորդ նամակը՝ «Հայերը» վերնագրով, որը նույնպես ուղղված էր «Եվրոպայի հայ ուսանողական միությանը»: Բտալացի նշանավոր հասարակական գործիչը կոչ էր անում ոչ թե ադմուկ-ադադակ հանել, այլ գործել, գտնելով, որ ուրիշների քաջալերական խոսքերը չեն կարող խրախուսել հայերին: Ա. Չիպրիանին գործի մարդ էր: Նրա կարծիքով, հայերը չպետք է զգացմունքներով առաջնորդվեն, քանի որ «ազատությունը չեն մուրար, այլ կառնեն, ուրիշներեն չեն խնդրեր, այլ կովելով ձեռք կրերեն»: Եթե ժողովուրդն ուզում է ազատ լինել, արցունքներ չպետք է թափի, այլ պետք է կազմակերպվի, պետք է պայքարով կռի իր ազատությունը: Նա քննադատում էր եվրոպական դիվանագիտությանը, որին հավատ չպետք է ընծայել, քանզի այն նույնքան վտանգավոր է, որքան ոճրագործ Աբդուլ Համիդը: Նրա կարծիքով, հայերի հույսը և հավատը պետք է լինի քաջությունը, հանդգնությունը, ատելությունը: «Նետուեցէք լեռները, – գրում է նա, – և Աբդուլ Համիդի աւագակներուն դեմ՝ աւագակային սրածութեան և ավերածութեան անխնայ պատերազմը մղեցէք, ըրէք անոնց, ինչպես որ անոնք Ձեզի ըրին⁹: Երկու ուղի կա մղձավանջային այդ վիճակից դուրս գալու համար՝ կամ մեռնել հերոսաբար՝ զենքը ձեռքին կովելով, կամ էլ՝ «լալկան» ձևով: Եթե ընտրվի առաջին ուղին, ապա կազատվեն, մինչդեռ երկրորդով ընթանալով՝ «ազատության հոտը անգամ չէք առնէր»: Ա. Չիպրիանին կոչ էր անում. «Հայեր, թօթեցէք Ձեր մեղապարտ անգործութիւնը»¹⁰:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ «Դրոշակ», 1901, -9, էջ 30:

¹⁰ Նույն տեղում:

Իտալացի ազատարարձ գարիբալդիականների նամակները չափազանց հետաքրքիր են Իտալիայի և հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրման համար:

СВОБОДОЛЮБИВЫЕ ГАРИБАЛЬДИЙЦЫ
О СУДЬБЕ АРМЯНСКОГО НАРОДА

ГРАЧЬЯ АСМАРЯН

Р е з ю м е

Во второй половине XIX в. историческая судьба армянского народа и разрозненность страны в какой-то мере были похожи на раздробленность Италии и судьбу итальянского народа. Один из героев Италии – Генрикос Витто, председатель комиссии «Зейтунского договора» между армянами и турками, принятого в 1896 г. Итальянские национальные герои Риччиоти Гарибальди (сын Джузеппе Гарибальди) и Амилкаре Чиприани писали вдохновенные письма армянскому народу, побуждая его освободиться от турецкого ига, советовали восстать и обещали свою помощь в этом деле. Эти письма очень интересны для изучения национально-освободительного движения итальянского и армянского народов.

FREEDOM-LOVING GARIBALDIANS ABOUT THE FATE
OF THE ARMENIAN PEOPLE

HRACHYA ASMARYAN

S u m m a r y

In the second part of the 19th century the historical fate of Armenian people and the fragmentation of the country somehow were like the dismemberment of Italy and the fate of Italian people. One of the Italian heroes – Henrikose Vitto, the chairman of the committee “The Zeytun Pact” among Armenians and Turkish people accepted in 1896. Italian national heroes Richiotti Garibaldi (the son of Giuseppe Garibaldi) and Amilkare Chipriani had written enthusiastic letters to Armenian people, motivating them to emancipate from the Turkish yoke, advised them to oppose and promised their help in that cause. These letters are very interesting for studying Italian-Armenian national-liberation movement.